



ՏԱԹԵՎ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՐԱ

2011 թ. սկիզբ առած տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների մշակման նոր փուլն ընթացք ստացավ 2015 թ.: Բարեփոխումների հիմնական ուղղությունը համայնքների խոշորացումն էր երեք փուլով: Արդյունքում համայնքների թիվը նվազեց մինչև 502: Հողվածում ներկայացված են խոշորացումից ակնկալվող և փաստացի ստացված արդյունքները, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու բարեփոխումների ազդեցությունը համայնքների ֆինանսական ցուցանիշների վրա:

Հիմնաբառեր. համայնքների խոշորացում, խոշորացված համայնք, ֆոնդային բյուջե, վարչական բյուջե, սեփական եկամուտներ

JEL: R19, R11

2011 թ. ՀՀ Կառավարության կողմից հավանության արժանացավ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը», որում ներկայացված երկու ուղղություններից առաջնայնությունը տրվեց համայնքների խոշորացմանը: Տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկը համարվող խոշորացումն ունի մի շարք առավելություններ.

- մասշտաբից էֆեկտ ու հնարավոր սիներգիզմ, ինչը ենթադրում է ավելի մեծ տարածքային միավորումներում աշխատանքների ավելի արդյունավետ իրականացում ավելի ցածր գներով,
- ոչ բարենպաստ ժողովրդագրական տարածքներից բնակչության վերաբնակեցման խնդրի լուծման տարբերակ, քանի որ փոքր համայնք-

ներից, որոնք գտնվում են աննպաստ աշխարհագրական դիրքում, բնակիչները տեղափոխվում են, ինչն էլ խոչընդոտում է համայնքի լիազորությունների կատարմանը,

- վարչատարածքային բաժանման համապատասխանեցում բնակեցված տարածքներին և տրանսպորտային ուղիներին,
- ծավալից տնտեսում, այսինքն՝ ավելի մեծ վարչական միավորը կարող է լիազորությունների ավելի լայն շրջանակ մատուցել ու իր առավելությունների շնորհիվ դա անել ավելի արդյունավետորեն, այն է՝ ներդրումներ ներգրավելու ավելի մեծ հավանականություն, արհեստավարժ աշխատակիցների ավելի մեծ թվաքանակ, ֆինանսական կայունության համեմատաբար բարձր մակարդակ¹:

Ինչպես համայնքների խոշորացումը, այնպես էլ ցանկացած այլ բարեփոխում դրական արդյունք է ունենում, եթե այն իրականացվում է՝ հաշվի առնելով տվյալ երկրի առանձնահատկությունները: Այդ մոտեցման հիման վրա էլ մեր երկրում մշակվել են խոշորացման մեթոդաբանական հետևյալ սկզբունքներն ու չափանիշները.

- միացվող համայնքների ընդհանուր վարչական սահմանի առկայություն,
- նոր ձևավորվող համայնքի կենտրոնը միացվող համայնքների նկատմամբ պետք է ունենա կենտրոնական դիրք, առնվազն 3000 բնակիչ և անհրաժեշտ նվազագույն ծավալի ենթակառուցվածքներ. կենտրոնից հեռավորությունը չպետք է գերազանցի 20 կիլոմետրը,
- պետք է առկա լինեն ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածքներ (մանկապարտեզ, բուժկետ, մշակույթի տուն/ակումբ) և միջնակարգ դպրոց,
- բնակավայրերի միջև հասարակական տրանսպորտային հաղորդակցություն ապահովող ճանապարհների (առնվազն՝ խճապատ) առկայություն,
- բնակավայրերի՝ նախկինում համատեղ կառավարման մարմնի առկայություն (գյուղխորհուրդ, ավանային խորհուրդ, քաղխորհուրդ),
- բնակավայրերի բնակիչների համատեղելիություն և մտածելակերպի ու հոգեկերտվածքի ընդհանրություն (մենթալություն): Ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքները կարող են խոշորացվել՝ միասնաձայն միայն առավելապես նույն ազգի ներկայացուցիչներով բնակեցված համայնքների հետ²:

Համայնքների խոշորացման պիլոտային ծրագիրն իրականացվեց 2015 թ., երբ մայիսի 17-ին Լոռու մարզի Թումանյան, Սյունիքի մարզի Տաթև և Տավուշի մարզի Դիլիջան համայնքային փնջերում անցկացվեցին փնջերում ընդգրկված համայնքների միավորման հարցով տեղական հանրաքվեներ, որոնց արդյունքում պարզվեց, որ բնակչության մեծամասնությունը կողմ է այդ գործընթացին: Նույն թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացում-

¹ St'u Territorial reforms in Europe: Does size matter? Centre of Expertise for Local Government Reform, Council of Europe, 2017, էջ 21:

² Տե՛ս ՀՀ Կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշման հավելված՝ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», էջ 25:

ներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը³, որը սահմանեց «բազմաբնակավայր համայնք» հասկացությունը, նոր համայնքների ձևավորման, այն է՝ համայնքների միավորման և բաժանման սկզբունքներն ու չափորոշիչները: Վերացավ «գյուղական» և «քաղաքային» համայնք սահմանազատումը, ձևավորվեցին Թումանյան, Տաթև և Դիլիջան նոր խոշորացված համայնքները, որոնք միավորում են 22 նախկին համայնք: Խոշորացումը հիմնավորող ուսումնասիրություններում կանխատեսվում էր ֆոնդային բյուջեի աճ, ինչպես նաև ծառայությունների մատուցմանն ուղղված ծախսերի աճ՝ կառավարման ապարատի պահպանման ծախսերի հաշվին⁴: Սակայն խոշորացման հետևանքով 2016 և 2017 թվականներին ֆոնդային բյուջեի մասնաբաժինը անկում է ապրել: Ծառայություններին ուղղված ծախսերն ունեն որոշակի աճ, բայց վարչական բյուջեում ընդհանուր հանրային ծառայությունների մասնաբաժինը մեծ կշիռ ունի, հատկապես՝ Թումանյան համայնքում: Եթե ուսումնասիրենք ՀՀ ՏԿԶՆ կայքում համայնքների տարեկան աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները⁵, ապա պարզ կդառնա, որ խոշորացումից հետո որոշ չափով ակտիվացել են համայնքներում կատարվող աշխատանքները, մասնավորապես՝ ճանապարհների բարեկարգումը, արձանագրվել է դպրոցների և նախակրթական համալիրների թվի աճ: Սակայն, կարծում ենք, որ իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակը ավելի համակարգային արդյունքների հասնելն է, ինչը ենթադրում է զարգացած համայնքների ձևավորում, որոնք կկարողական մատուցել օրենքով իրենց վերապահված հանրային ծառայություններն ու այդ աշխատանքների կատարման ֆինանսական միջոցների մեծ մասը ստեղծել ինքնուրույն՝ դրանով իսկ ապահովելով իրենց անկախության բարձր մակարդակը: Չնայած պիլոտային ծրագրերի ոչ հուսադրող արդյունքներին՝ խոշորացման գործընթացը շարունակվեց, և հաջորդ երկու փուլերն իրականացվեցին 2016 և 2017 թվականներին:

2016 թ. հունիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովի ընդունած «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով 118 համայնքները, որոնց կազմում 136 բնակավայր էր, խոշորացվեցին և դարձան 15-ը: 2017 թ. հունիսի 9-ին ՀՀ Ազգային ժողովի ընդունած «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով միավորվեցին 325 համայնքներ՝ ձևավորելով 34 նոր համայնք: Բարեփոխումների արդյունքում 465 նախկին համայնքները միավորվեցին 52 խոշորացված համայնքներում, իսկ ընդհանուր համայնքների թիվը դարձավ 502՝ միավորելով 1002 բնակավայր:

Եթե խոշորացման առաջին փուլում պահպանվել էին այդ գործընթացի հիմնական սկզբունքները, ապա հաջորդ փուլերում դրանք ակնհայտորեն խախտվեցին: Մասնավորապես, խոշորացված համայնքի կենտրոնից մյուս բնակավայրերի հեռավորության նկատմամբ սահմանված առավելագույն 20 կմ-ը գերազանցվում է մի շարք համայնքներում: Այսպես օրինակ, խոշորացված Սիսիան համայնքի կազմում 32 բնակավայր է, և դրանցից 9-ի հեռա-

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 24.11.2015 թ., ՀՕ-148-Ն:


⁴ Տե՛ս ՀՀ ՏԿԶՆ պաշտոնական կայքէջ. <http://www.mtad.am/hy/hayecakarger>, Համայնքների խոշորացման փնջեր:

⁵ Տե՛ս ՀՀ ՏԿԶՆ պաշտոնական կայքէջ. <http://www.mtad.am/hy/18hamynqner/>:

վորությունը գերազանցում է 20 կմ-ը. Շենաթաղի հեռավորությունը՝ 35, Շամբինը՝ 25, Մուծքինը՝ 26, Լորինը՝ 30, Լծենինը՝ 24, Ղարբասինը՝ 25, Պետաթաղինը՝ 28, Բալլաքինը՝ 22, Արևիսինը՝ 21⁶: Այսինքն, Շենաթաղ գյուղի բնակիչը պետք է անցնի 35 կմ ճանապարհ, որպեսզի համայնքի կենտրոն հասնի, ինչն էլ ենթադրում է լրացուցիչ ժամանակի և միջոցների կորուստ:

Խոշորացման գործընթացը պետք է նպաստի համայնքների հնարավորությունների ընդլայնմանը և աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Սա գնահատելու հիմնական եղանակը պարզելն է, թե արդյոք բարեփոխումներից հետո ՏԻՄ-երն իրենց լիազորությունների ավելի մեծ շրջանակն ավելի բարձր արդյունավետությամբ են իրականացնում և ունեն արդյոք ավելի մեծ անկախություն:

Համայնքների խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների ծավալը կարելի է գնահատել այդ ոլորտներին հատկացված միջոցներով: Քանի որ բարեփոխումների վերջին փուլը 2017 թվականին էր, ապա ստացված աշխատանքների արդյունքները ամբողջ երկրի մակարդակով հնարավոր կլինի գնահատել 2018 թ. արդյունքներով: 2018 թ. առաջին 9 ամիսներին վարչական բյուջեի կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 1-ում, որից երևում է, որ համայնքային վարչական բյուջեի մեծ մասը շարունակում է բաժին ընկնել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին, որոնք 2018 թ. առաջին 9 ամիսներին կազմել են բյուջեի վարչական մասի 40%-ը: Հաջորդ ոլորտը, որին բաժին է ընկնում վարչական բյուջեի ծախսերի 34%-ը, կրթությունն է, իսկ մյուս ոլորտներին բաժին են ընկնում բավական քիչ միջոցներ, ընդ որում՝ կան ոլորտներ, որոնց ընդհանրապես միջոցներ չեն տրամադրվում ոչ թե համայնքի մակարդակով, այլ՝ մարզի:




Գծապատկեր 1. Վարչական բյուջեի կառուցվածքն ըստ գործառնական ծախսերի, 2018 թ. առաջին 9 ամիսներին⁷

⁶ Տե՛ս ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջ. <http://www.sisian.am>:
⁷ Գծապատկերը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ ՀՀ ՏԿԶՆ պաշտոնական կայքէջ, 2018 թ. 9 ամիսների ՀՀ համայնքների բյուջետային ծախսերի վերաբերյալ. <http://www.mtad.am/hy/budgetary-expenditure/>:

Մասնավորապես, վարչական բյուջեից միջոցներ չեն հատկացվում. պաշտպանությանը՝ Արմավիրի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերում, հասարակական կարգին՝ Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արմավիրի մարզերում, առողջապահությանը՝ Վայոց ձորի, Սյունիքի, Շիրակի, Արագածոտնի մարզերում⁸:

Սա նշանակում է, որ վարչատարածքային բարեփոխումների արդյունքում համայնքներն իրենց լիազորությունների կատարումը դեռևս չեն կարողանում ապահովել: Ինչ վերաբերում է բյուջեի վարչական և ֆոնդային հատվածներին, ապա այստեղ ևս բյուջեի մեծ մասն ուղղվում է վարչական հատված:

Տեղական ինքնակառավարման համակարգի հիմքում տեղական ինքնակառավարման մարմինների՝ խնդիրները սեփական միջոցներով լուծելու ինքնուրույնությունն է, ինչն էլ ենթադրում է ֆինանսական կայունություն և անկախություն: Ֆինանսական անկախությունը ենթադրում է սեփական եկամուտներով կազմված համայնքի բյուջե, որտեղ կենտրոնական իշխանությունների կողմից հատկացումները սահմանափակ են, ինչն էլ ապահովում է համայնքի անկախությունը:



Գծապատկեր 2. Ծախսերի բաշխվածությունն ըստ վարչական և ֆոնդային բյուջեների, 2018 թ. առաջին 9 ամիսների⁹

Ինչպես նշեցինք, 2016 թ. ձևավորվեցին ևս 15 խոշորացված համայնքներ: Եթե ուսումնասիրենք առաջին երկու փուլերով խոշորացված համայնքների եկամուտների կառուցվածքը, ապա կտեսնենք որոշակի դրական տեղաշարժ, մասնավորապես՝ 2017 թ., 2016-ի համեմատ, խոշորացված 18 համայնքների բյուջեների եկամուտներում սեփական եկամուտների կշիռն ավելացել է՝ 2016 թ. 31.65%-ից դառնալով 36,75%:

Սակայն խոշորացման երեք փուլերի ավարտից հետո, 2018 թ. 9 ամիսների տվյալներով, ամբողջ երկրի համայնքային բյուջեի եկամուտները կազմել են 40,184,317 հազ. դրամ, որից սեփական եկամուտները կազմել են 13,074,607.3 հազ. դրամ¹⁰, որը բոլոր համայնքների եկամուտների ընդամենը

⁸ Տե՛ս ՀՀ ՏԿԶՆ պաշտոնական կայքէջ, 2018 թ. 9 ամիսների ՀՀ համայնքների բյուջետային ծախսերի վերաբերյալ. <http://www.mtad.am/hy/budgetary-expenditure/>:

⁹ Գծապատկերը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ նույն տեղում:

¹⁰ Տե՛ս ՀՀ ՏԿԶՆ պաշտոնական կայքէջ, 30.09.2018 թ. դրությամբ ՀՀ համայնքների բյուջետային եկամուտների վերաբերյալ, <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/>:

32.54%-ն է: Համեմատության համար նշենք, որ մինչ բարեփոխումները՝ 2010 թ., համայնքների սեփական եկամուտները նույնպես կազմել են ընդհանուր եկամուտների 32%-ը¹¹:

Աղյուսակ 1

18 խոշորացված համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում 2016-2017 թթ.¹²

Հ/ի	Անվանումը	2016			2017		
		Ընդհանուր եկամուտ	Սեփական եկամուտ	Սեփ. եկամուտների կշիռը ընդհ. եկամուտներում (%)	Ընդհանուր եկամուտ	Սեփական եկամուտ	Սեփ. եկամուտների կշիռը ընդհ. եկամուտներում (%)
1	Ուրցաձոր	104,713.9	25,956.4	24.79	117,225.1	32,544.4	27.76
2	Թումանյան	105,608.8	21,913.8	20.75	116,693.8	28,581.2	24.49
3	Արփի	60,230.5	24,098.5	40.01	79,855.7	37,913.4	47.48
4	Ամասիա	134,967.5	31,503.9	23.34	154,525.0	49,166.0	31.82
5	Աշոցք	170,960.5	40,482.1	23.68	194,117.3	61,112.7	31.48
6	Սարապատ	94,622.6	21,599.3	22.83	107,001.9	31,328.3	29.28
7	Գորիս	733,369.4	145,790.8	19.88	817,747.4	200,686.7	24.54
8	Տաթև	159,024.8	25,354.7	15.94	172,501.1	40,068.7	23.23
9	Տեղ	137,057.9	35,420.0	25.84	169,415.9	48,089.0	28.39
10	Գորայք	165,466.2	140,306.3	84.79	170,300.3	148,457.7	87.17
11	Մեղրի	467,464.3	186,138.7	39.82	638,743.4	251,933.5	39.44
12	Վայք	181,134.4	42,513.6	23.47	218,473.4	62,194.2	28.47
13	Զառիթափ	242,895.5	150,802.9	62.09	241,386.5	157,157.8	65.11
14	Զերմուկ	337,320.4	193,490.6	57.36	436,402.1	277,326.4	63.55
15	Դիլիջան	638,712.9	182,291.6	28.54	691,457.9	240,741.3	34.82
16	Նոյեմբերյան	417,240.1	75,945.3	18.20	423,023.8	103,734.7	24.52
17	Այրում	202,245.5	52,868.4	26.14	219,319.3	73,706.7	33.61
18	Կողբ	124,345.0	20,547.2	16.52	127,761.9	27,945.3	21.87
	Ընդամենը	4,477,380.20	1,417,024.10	31.65	5,095,951.80	1,872,688.00	36.75

Կարծում ենք, որ համայնքների սեփական եկամուտների չափն ապահովելու համար կարևոր է ոչ միայն բյուջեի օգտագործման արդյունավետության բարձրացումը, այլև համայնքի բյուջեի շարունակական աճի ապահովումը սեփական եկամուտների աճի հաշվին: Եթե մեր երկրում համայնքների բյուջեի հիմնական աղբյուրը պետության կողմից տրվող դոտացիաներն են, ապա այլ երկրներում համայնքների բյուջեի ձևավորման հիմնական մասը բաժին է ընկնում տեղական հարկերին: ՀՀ ՏԻՄ օրենքով նույնպես սահմանված է, որ համայնքների բյուջեի կազմում նաև եկամտահարկից և շահութահարկից մասհանումներ են ընդգրկվում, սակայն դեռևս այդ մասհանումները չեն կատարվում: Հարկերից մասհանումների տրամադրումը մեծ նշանակության ունի համայնքի զարգացման գործում, քանի որ ուղղակիորեն կախված է համայնքի տնտեսական գործունեության արդյունքից: Այսինքն, համայնքն ինքը պետք է շահագրգռված լինի տնտեսական գործունեության զարգաց-

¹¹ Տե՛ս ՀՀ ՏԿԶՆ պաշտոնական կայքէջ, 2010 թ. ՀՀ համայնքային բյուջետային եկամուտների վերաբերյալ, <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/>:

¹² Աղյուսակը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ ՀՀ ՏԿԶՆ պաշտոնական կայքէջ. <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/>:

ման և ներդրումներ ներգրավելու հարցում: Եվրասիական երկրների մեծ մասում համայնքային բյուջեի մուտքերում գերակշռում են հարկային մուտքերը: Բացառություններից մեկը Հայաստանն է, որի հարկային մուտքերը միայն սեփականության նկատմամբ հարկերն են (հողի հարկ և գույքահարկ)՝ ի տարբերություն Ռուսաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի, որտեղ հարկային մուտքերի մեծ մասը ֆիզիկական անձանց կողմից վճարվող հարկերն են¹³:

Բարեփոխումների արդյունքները վկայում են, որ փոփոխությունները բարենպաստ ազդեցություն չունեցան տեղական ինքնակառավարման համակարգի վրա: Իրականացված պիլոտային ծրագրերը չծառայեցին իրենց նպատակին, քանի որ այդ ծրագրերի արդյունքներն ազդակ էին՝ վերանայելու խոշորացման գործընթացը, ինչը տեղի չունեցավ: Հարկ է նշել, որ այսօր, բավական մեծածավալ փոփոխություններից հետո, մենք դեռևս ունենք համայնքներ, որոնք ի վիճակի չեն կատարելու հիմնական խնդիրները, ապահովելու ինքնուրույնության և անկախության բավարար մակարդակ:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշման հավելված «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ»:
2. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 24.11.2015 թ., ՀՕ-148-Ն:
3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայքէջ.
<http://www.mtad.am>:
4. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջ. <http://www.sisian.am>:
5. Territorial reforms in Europe: Does size matter? Centre of Expertise for Local Government Reform, Council of Europe, 2017.
6. United Cities and Local Governments. 2010. Local Government Finance: The Challenges of the 21st Century, Second Global Report on Decentralization and Local Democracy, Barcelona.

¹³ Տե՛ս United Cities and Local Governments. 2010. Local Government Finance: The Challenges of the 21st Century, Second Global Report on Decentralization and Local Democracy, Barcelona, էջ 132-133:

TATEV AKOPYAN

Аспирант кафедры управления АГЭУ

Влияние объединения общин на систему местного самоуправления РА.– Новый этап реформ системы местного самоуправления, который начался в 2011 году, получил развитие в 2015. Основным направлением реформ было объединение общин, которое осуществлялось в три этапа. В результате количество общин сократилось до 502. В статье представлены ожидаемые и фактические результаты консолидации, что позволяет оценить влияние реформ на финансовые показатели сообщества.

Ключевые слова: объединение общин, объединенные общины, фондовый бюджет, административный бюджет, собственный доход.

JEL: R19, R11

TATEV HAKOBYAN

PhD Student at the Chair of Management at ASUE

Influence of Community Mergers on the System of Local Self-government in the RA.– A new phase of reforms of local self-government system which started in 2011 started, and finally the reforms started in 2015. The main purpose of the reforms was the amalgamation of the communities which was implemented in three stages. As a result, the number of communities decreased to 502. The paper presents expected and actual results of consolidation, which allows to evaluate the impact of reforms on community financial indicators.

Key words: community amalgamation, merging community, stock budget, administrative budget, own income.

JEL: R19, R11